ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԵՎ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ 1878 ԹՎԱԿԱՆԻՆ

Հ. Հ. ՈՒԼՈՒՆՅԱՆ (Մոսկվա)

Բուլղար ժողովրդի ելույթները թուրքական բռնապետության դեմ հաճախակի դարձան հատկապես XVIII—XIX դդ., ռուս-թուրքական պատերազմների շրջանում, որոնք խարխլեցին Օսմանյան կայսրության հիմքերը և մեծ դեր խաղացին բալկանյան ժողովուրդների, այդ թվում և բուլղար ժողովրդի ազգային-ազատագրական շարժումների զարգացման գործում։

XVIII դարի վերջին և XIX դարի առաջին կեսին Բուլղարիայում տեղի էր ունենում ֆեոդալական հարաբերությունների քայքայում և կապիտալիստական հարաբերությունների զարգացում։

Երկրում սկսվեց ազգային-ազատագրական շարժման վերելք։ Բուլղար ժողովրդի անջատ ելույթները ձևավորվում են որպես ազգային-ազատագրական շարժում, որի գլուխ են անցնում առաջադիմական դեմոկրատական ուժերի ներկայացուցիչները։

Ռուսական հեղափոխական շարժումները մեծ ազդեցություն գործեցին Բուլղարիայում ազատագրական շարժման զարգացման և բուլղար հեղափոխական դեմոկրատների գաղափարախոսության վրա։ Բուլղար երիտասարդությունը սովորելու էր մեկնում Ռուսաստան։ Պուշկինի և Գոգոլի, Բերցենի և Բելինսկու, Չերնիշևսկու և Դոբրոլյուբովի ավանդույթներով են կրթվել բուլղար շատ բանաստեղծներ, գրողներ և հասարակական գործիչներ։ «Մեր հեղափոխականները ռուսական մեծ դեմոկրատների ու հումանիստների աշակերտներն էին։ Ռուսական սոցիալական դեմոկրատիան մեծագույն ազդեցություն է գործել Բուլղարիայում դեմոկրատական շարժման ձևավորման վրա»[1], գրել է ԲԿԿ նշանավոր գործիչ Վասիլ Կոլարովը։ Բուլղար հեղափոխականների նախահայրն ու բուլղարական ազգային-ազատագրական շարժման մեջ հայդուկային տակտիկայի հիմնադիրն է դառնում Գեորգի Ռակովսկին։ Սակայն ինչպես ցույց տվեցին հետագա դեպքերը, հայդուկային շարժումը իրեն չարդարացրեց։ Այդ շարժման եզրափակիչ փուլը հանդիսացավ 1868 թ. Խ. Դիմիտրովի և Ս. Կարաջայի կողմից ղեկավարած հայդուկային խմբի կործանումը։

Բուլղարական ականավոր հեղափոխական-դեմոկրատ Վասիլ Լևսկին 1868 թ. կոչ էր անում պայքարի նոր միջոց և ուղի գտնելու անհրաժեշտության մասին։ Նա հիմնադրեց գաղտնի հեղափոխական կոմիտեներ, որոնք գլխավորեցին բուլղար ժողովրդի ապստամբության նախապատրաստությունը։ Կազմակերպությունը ղեկավարելու համար Լևսկին 1870 թ. ազգային-ազատագրական և հեղափոխական շարժման ականավոր գործիչ, գրող և հրապա-

---

[1] В. Коларов, Българо-советската дружба, «Работническо дело», 22 ноября 1946.

ռակախոս Լյուբեն Կորավելովի օգնությամբ Բուխարեստում հիմնում է Բուլղարական Հեղափոխական Կենտրոնական Կոմիտե (ԲՀԿԿ)։ Չնայած մեծ դժվարություններին, Լևսկին մի քանի տարում երկրում ստեղծեց գաղտնի կոմիտեների լայն ճյուղավորված ցանց։ Բայց նրան չհաջողվեց ավարտի հասցնել իր սկսած գործը։ 1872 թ. վերջին նա ձերբակալվեց և 1873 թ. փետրվարին մահապատժի ենթարկվեց։ Լևսկու ողբերգական մահվանը հաջորդած հեղափոխական կազմակերպության ջախջախումը ժամանակավորապես կասեցրեց հեղափոխական կոմիտեների մեծ մասի գործունեությունը։

XIX դարի 70-ական թթ. կեսերին բուլղարական ազգային-ազատագրական և հեղափոխական շարժումը նորից աշխուժացավ, կապված Բոսնիայում և Հերցեգովինայում 1875 թ. ծագած ապստամբության հետ։ Բալկանյան սլավոնների ապստամբությունը սկիզբը դրեց 1875—1878 թթ. արևելյան նոր ճգնաժամի, որը սրեց Օսմանյան կայսրության ընդհանուր ճգնաժամը։ Բուլղարիայում իրադրությունը շիկացել էր և 1875 թ. սեպտեմբերին ծագեց Ստարա Զագորայի ապստամբությունը։ Չնայած նրա սահմանափակ սահմաններին և թուրքական իշխանությունների կողմից արագորեն ճնշվելուն, ապըստամբությունը արևելյան ճգնաժամի տարածման սկիզբը հանդիսացավ։

1876 թ. գարնանը Բուլղարիայում վերստին ապստամբություն ծագեց, որը բուլղար ժողովրդի ազգային-ազատագրական և հեղափոխական շարժումների պատմության մեջ ստացավ Ապրիլյան ապստամբություն անունը։ Ապրիլյան ապստամբության հերոսապատումը ավարտվեց բուլղարական ականավոր հեղափոխական-դեմոկրատ, բանաստեղծ ու հրապարակախոս Հայդուկ Խրիստո Բոտևի ելույթով։

Բ. Դուռը դաժանորեն ճնշեց Ապրիլյան ապստամբությունը։ Սպանվեց և ահաբեկչության զոհ դարձավ 30 հազարից ավելի մարդ։ Հրկիզվեցին 80 և հիմնովին թալանվեցին 200 բնակավայրեր։ Հազարավոր որբեր ու այրիներ մնացին, հարյուրավոր երիտասարդ կանայք ու աղջիկներ պատվազրկվեցին ու անարգվեցին, տարվեցին հարեմները, գերեվարվեցին և վաճառվեցին Արևելքի ստրկավաճառական շուկաներում։ Ապստամբության ճնշումից հետո ստեղծված արտակարգ դատարանները սկսեցին հաշվեհարդար տեսնել ապստամբների հետ։ Տասնյակ ազգային հերոսներ կախաղան հանվեցին, հարյուրավորները աքսորի ու տաժանակրության ուղարկվեցին փոքրասիական ամրոցներն ու բանտերը։

Բ. Դուռը հալածանքներ սկսեց հատկապես բուլղար մտավորականության դեմ, համարելով նրան հիմնական հրահրիչն ու մեղավորը։ Առանձնապես պատժվում էին Ռուսաստանում կրթություն ստացած անձինք։ 1875 թ. հունվարին Պետերբուրգում գտնվող թուրքական դեսպանը հայտնում էր իր կառավարությանը «Ռուսաստանում սովորած երիտասարդ բուլղարների անհուսալիության մասին», «իսկ թուրքական կառավարությունը իրեն թույլ տվեց բացեիբաց հայտարարելու», որ Ռուսաստանում «ուսումնական հաստատությունները բուլղարների համար ծառայում են որպես հեղափոխականների բույն»[2],— զայրույթով գրում էր Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրության Ասիական դեպարտամենտի դիրեկտոր Պ. Ստեմոուխովը Ն. Իգնատևին։

---

[2] Архив Внешней политики России (АВПР), ф. Посольство в Константинополе, 1875, д. 400, *թ. 21*։

Իրոք, բուլղար ուսանողների մի մասը, Ռուսաստանում կրթություն ստանալով, յուրացնում էր ռուս հեղափոխական-դեմոկրատների գաղափարները և հայրենիք վերադառնալով ակտիվ մասնակցություն էր ունենում ազգային-ազատագրական և հեղափոխական շարժումներին։

Ֆիլիպուպոլսի ռուսական վիցե-կոնսուլը հայտնում էր Ն. Իգնատևին, որ համաձայն իր մոտ եղած տվյալների, Միդհատ փաշան իր կողմնակիցների հետ միատեղ որոշում են ընդունել Ապրիլյան ապստամբությունը ճնշելու պատրվակով «կոտորել ողջ մտավորականությունը ու կենդանի չթողնել Ռուսաստանում կրթություն ստացած և ոչ մի ուսուցչի, փակել բոլոր ուսումնարանները և ժողովրդին ճզմել այն աստիճան, որ նրան զրկեն երբևէ ուշքի գալու և այժմյան վիճակին հասնելու որևէ հնարավորությունից, որը վտանգավոր լինի... Բ. Դոան տիրապետության համար»[3]։ Այսպես, օրինակ, Դաբրովոյում զինվորական իշխանությունները ձերբակալեցին ուսուցիչներին, փակեցին դպրոցը և այն վերածեցին զորանոցի, իսկ վախեցած բնակիչներին ստիպեցին հայտարարություն ստորագրել, որ «հեղափոխական գաղափարները տարածվել են հենց այդ դպրոցի կողմից»[4]։

Ապրիլյան ապստամբությունը բուլղար ժողովրդի ազգային-ազատագրական շարժման պատմության գագաթնակետը հանդիսացավ, նա «Բուլղարիայում անուղղելիորեն սասանեց թուրքական սուլթանների ֆեոդալական բռնապետական իշխանության հիմքերը»[5]։

Իր բնույթով Ապրիլյան ապստամբությունը բուրժուա-դեմոկրատական, հակաֆեոդալական և ազգային-ազատագրական շարժում էր։ Խրիստո Բոտևը հատուկ նշանակություն էր տալիս Ապրիլյան ապստամբությանը և գտնում էր, որ այն կդառնա հարավ-սլավոնական ժողովուրդների ազգային-ազատագրական բազմադարյան պայքարի եզրափակող փուլը[6]։ Բոտևի կանխագուշակությունները իրականացան։

Թեև Ապրիլյան ապստամբությունը պարտվեց, սակայն արագացրեց Արևելյան ճգնաժամի լուծումը և նախերգանքը հանդիսացավ ռուս-թուրքական 1877—1878 թթ. ազատագրական պատերազմի։

Արևելյան ճգնաժամի սկզբից ևեթ ռուսական կառավարությունը ձգտում էր խաղաղ ճանապարհով կարգավորել առաջացած ճգնաժամը։ Ռուսական դիվանագիտությունը բազմաթիվ փորձերի դիմեց արևմտյան դիվանագիտության հետ համատեղ միջոցներով բավարարելու ապստամբած հարավային սլավոնների օրինական պահանջները։ Սակայն արևմտաեվրոպական դիվանագիտության մերժողական վերաբերմունքը բալկանյան սլավոնների խնդրի լուծման հարցում հուսագրում էր Բ. Դոանը Բոսնիայում, Հերցեգովինայում և Բուլղարիայում ազգային-ազատագրական շարժումները ուժով ճնշելու իր ձգտման մեջ։

Ապրիլյան հերոսապատման ժամանակ Ալեքսանդր II-ը Բեռլին էր մեկնել պետական վարչապետ և արտաքին գործոց մինիստր Ա. Գորչակովի հետ, հուսալով, որ երեք կայսրերի միությունը միացյալ ուժերով կկարողանա

---

[3] Архив на Науден Геров, т. II, София, 1932, էջ 169։

[4] АВПР, ф. Посольство в Константинополе, 1876, д. 2192, թ. 122։

[5] Д. Косев, Априлското въстание—върхне точка на българската национально-демократическа революция. Сб. «Априлското въстание 1876—1966», 1966, էջ 7։

[6] «Нова България», 5 мая 1876.

արևելյան ճգնաժամի ընդունելի լուծումը գտնել՝ ինչպես Բալկանյան թերակղզու սլավոն ժողովուրդների, այնպես էլ Բ. Դռան կառավարության համար։ Սակայն բեռլինյան տեսակցությունը չարդարացրեց ռուսական կառավարության հույսերը։ Մագած սուր տարաձայնությունները լուծելու հարցում ռուսական դիվանագիտության արած կոնստրուկտիվ առաջարկությունները (այսինքն ապստամբած նահանգներին ինքնուրույնություն տալը) դիմադրության հանդիպեցին Ավստրո-Հունգարիայի կողմից, որին գաղտնի կերպով հովանավորում էր Գերմանիայի վարչապետ Բիսմարկը։

Երեք կայսրերի միության մեջ Արևելյան խնդրի կարգավորման վերաբերյալ հայացքների միասնության բացակայությունը բարդանում էր հարավսլավոնական պրոբլեմի լուծման նկատմամբ Անգլիայի ժխտողական վերաբերմունքով։ Իսկ դա, բնականաբար, ոգևորում էր Բ. Դռանը, որը, զգալով մեծ տերության հովանավորությունը, ուժեղացնում էր պատժիչ գործողությունները Օսմանյան կայսրության ապստամբած նահանգներում։

Անգլիական կառավարության նախագահ Բ. Դիզրայելին և արտաքին գործոց մինիստր լորդ Հ. Դերբին Համայնքների պալատի ներկայացուցիչների հարցումներին՝ Բ. Դռան կողմից Բուլղարիայի ապստամբությունը դաժանորեն ճնշելու մասին, հայտարարեցին, որ իրենց ոչինչ հայտնի չէ։ Անգլիական կառավարության ղեկավարները ջանում էին չնկատել սուլթանական ռեակցիայի անզուսպ սանձարձակությունները, իսկ Կ. Պոլսում Մեծ Բրիտանիայի դեսպան սրբ Գ. Էլիոտը ֆորին օֆիսի ղեկավար լորդ Դերբիին ուղղված նամակում անպատկառորեն հայտնում էր Անգլիայի կառավարող շրջանների վերաբերմունքը Բուլղարիայում կատարվող դեպքերի կապակցությամբ. «Իմ, ինչպես նաև անգլիական քաղաքական շատ գործիչների կարծիքով, բուլղարների զոհերը՝ 10 կամ 20 հազար մարդ, սովորական երևույթ է այդ կիսաքաղաքակիրթ ասիական երկրում... և այդ զոհերը ծանրակշիռ պատճառ չեն կարող լինել այն բանի համար, որպեսզի մենք փոխենք միակ ճիշտ քաղաքականությունը, որը և կարող է պահպանել մեր շահերը»[7]։

Էլիոտի նամակը Անգլիայի արտաքին գործերի գլխավոր ղեկավարներից մեկին և Դիզրայելիի մերժումը՝ աջակցել արևելյան ճգնաժամի խաղաղ լուծման գործում ռուսական դիվանագիտության ձգտումներին, հանդիսանում էին Անգլիայի պահպանողական կառավարության հակառուսական, հակասլավոնական քաղաքականության օղակները։ Նորին մեծության կառավարությունը նպատակահարմար չէր համարում պաշտպան կանգնել Բալկանյան թերակղզու սլավոն ժողովուրդներին։ Մեծ տերությունների հետ Անգլիայի համատեղ գործողությունները կարող էին նշանակել բալկանյան ճգնաժամի խաղաղ լուծում, իսկ դա չէր մտնում Դիզրայելիի ծրագրերի մեջ։ Նրան անհրաժեշտ էր Ռուսաստանը գժտեցնել Թուրքիայի հետ, այնուհետև օգտվել դրա պտուղներից, ինչը և տեղի ունեցավ հետագայում[8]։

Մինչդեռ Բուլղարիայում, ինչպես հայտնում էին Իգնատևին ռուսական հյուպատոսները, տեղական իշխանությունների թողտվությունների պատճառով շարունակվում էին դաժանությունները, ոչնչացվում ու հրդեհվում էին գյուղերը, կործանվում էր բնակչությունը։ Ամեն ինչ արվում էր, «որպեսզի

[7] R. W. Seton-Watson, Disraeli, Gladston and the Eastern Question, New York, 1962, էջ 63։

[8] О. Б. Шпаро, Захват Кипра Англией, М., 1974.

բուլացվի սլավոնական շերտը, որի վրա, ինչպես ենթադրվում էր, տարածված էր Ռուսաստանի ազդեցությունը»[9]։ Կ. Պոլսում ռուսական դեսպանի զանազան աղբյուրներից ստացած տեղեկություններում ասվում էր, որ Բուլղարիայում արյունահեղության նախաձեռնողը Միդհատ փաշան էր, որը բուլղար բնակչության բոլոր բողոքներին պատասխանում էր. «Դուք հույս էիք կապել Ռուսաստանի հետ։ Դե ուրեմն թող նա հետո գա, միայն ավերակներ կգտնի»[10]։ Բուլղար ժողովրդի թշվառ դրությունից ձգտում էին օգուտ քաղել արևմտաեվրոպական երկրները, որոնց գործակալները բուլղարների շրջանում պրոպագանդա էին մղում՝ պնդելով, որ «նրանց բոլոր դժբախտությունները դալիս են Ռուսաստանին և ուղղափառությանը հավատարիմ լինելուց»[11]։

Դրությունը Բալկաններում օրըստօրե բարդանում էր և սպառնում էր նոր պայթյունով, որը և տեղի ունեցավ 1876 թ. հունիսի 18 (30)-ին, երբ Սերբիան պատերազմ հայտարարեց Բ. Դռանը, իսկ երկու օրից նրա օրինակին հետևեց Չերնոգորիան։ Սերբիայի ու Չերնոգորիայի կառավարությունները գիտեին, որ ռուսական կառավարությունը «կդատապարտեր ամեն մի վտանգավոր արարք»[12], և գաղտնի պատերազմի էին պատրաստվում Բ. Դռան դեմ՝ Ռուսաստանին կանգնեցնելով կատարված փաստի առաջ։ Արևելյան ճգնաժամը ընդարձակում էր իր սահմանները, ընդգրկելով նոր երկրներ, սակայն ռուսական դիվանագիտությունը դեռ հավատում էր, թե Բալկանյան կոնֆլիկտը հնարավոր կլինի լուծել խաղաղ ճանապարհով։

Միջազգային իրավիճակը Եվրոպայում, հատկապես Թուրքիայի կառավարական հեղաշրջումից հետո, լուրջ տագնապ ու անհանգստություն էր պատճառում XIX դարի երկրորդ կեսի ռուսական դիվանագիտության ականավոր ներկայացուցիչներից մեկին՝ Իգնատևին։

Մուրադ V-ի գահընկեցությունից և Օսմանյան կայսրության նոր սուլթան Աբդուլ-Համիդ II-ի (1876 թ. օգոստոս 19/30) իշխանության գլուխ անցնելուց, ինչպես նաև Բ. Դռանը 1876 թ. հոկտեմբերին Ռուսաստանի ուլտիմատումից (որը փրկեց Սերբիան ու Չերնոգորիան լրիվ ջախջախումից) քիչ առաջ, արևմտաեվրոպական դիվանագիտության գործողություններից ընկճված և Ռուսաստանի միջազգային վիճակի ապագայի համար անհանգստացած Իգնատևը, Ալեքսանդր II-ին ուղղված իր զեկույցում վերլուծել էր Բալկաններում տեղի ունեցող քաղաքական դեպքերը։ Իգնատևի կարծիքով, որը Բալկաններում Ռուսաստանի վճռական գործողությունների կողմնակից էր, Ռուսաստանը չպետք է ձեռքից բաց թողնի արևելյան ճգնաժամի պատճառով ստեղծված քաղաքական իրավիճակը՝ վճռելու համար, ինչպես հարավային սլավոնների, այնպես էլ Բալկանյան թերակղզու մյուս ժողովուրդների հարցերը[13]։

* * *

1875 թ. ապստամբությունները Հերցեգովինայում ու Բոսնիայում, 1875 թ. Ստարա Զագորայի և 1876 թ. Ապրիլյան ապստամբությունները Բուլղարիա-

9 АВПР, ф. Канцелярия, 1876, д. 29. թ. 226, 228։

10 Նույն տեղում, թ. 226։

11 Նույն տեղում, թ. 445։

12 «Освобождение Болгарии от турецкого ига». Сборник документов, т. I, М., 1961, էջ 262—267։

13 АВПР, ф. Канцелярия, 1876, д. 29, թ. 465—471։

յում, ինչպես նաև 1876 թ. սերբ-թուրքական պատերազմը ալեկոծեցին Ռուսաստանի հասարակական կարծիքը և առաջ բերեցին ժողովրդական մասսաների ակտիվ մասնակցությունը՝ իրենց ազատագրման համար պայքարող հարավային սլավոններին բարոյական և նյութական օգնություն ցույց տալու գործում։ «Բուլղարիայում թուրքական պատժամիջոցները զայրույթի պայթյուն առաջացրին նույնիսկ մեր հասարակ ժողովրդի մեջ»[14],— գրում էր այդ դեպքերի ժամանակակից, լիբերալ գրող Պ. Դ. Բոբորիկինը։

Ժամանակի ռուսական բոլոր ուղղությունների պարբերական մամուլը, արտացոլելով ռուսական հասարակության տարբեր խավերի վերաբերմունքը բուլղար ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի նկատմամբ, փութով արձագանքեց Բուլղարիայի Ապրիլյան ապստամբությանը։ Պահպանողական, լիբերալ ու դեմոկրատական ուղղությունների մամուլը քննարկում էր արևմտաեվրոպական պետությունների բալկանյան քաղաքականության խնդիրները, գնահատական էր տալիս Բուլղարիայում տեղի ունեցող դեպքերին և իր տեսակետներն էր հայտնում նրա ապագա պետական կառուցվածքի մասին։

Մամուլում առաջին հաղորդումները երևացին ապրիլի 24-ից 28-ի շրջանում, իսկ մայիսի սկիզբներից ռուսական համարյա ողջ մամուլը ամբողջ ձայնով խոսեց այդ դեպքի մասին։ Թերթերի կարծիքով ապստամբության գլխավոր պատճառը իշխանությունների կամայականություններն էին։ Պահպանողական ուղղության «С.-Петербургские ведомости» թերթը առաջնորդողում գրում էր. «Հեղափոխական շարժումը Բուլղարիայում, որի գոյությունը դեռ օրերս ժխտում էին, դրսևորվեց այժմ նոր ուժով»[15]։ Ուշագրավ է, որ թերթը հույս էր հայտնում, թե ապստամբներին կմիանա թուրք բնակչությունը, «ինչպես այդ արել են արդեն Բոսնիայի մահմեդականները», քանի որ «ներկա կարգերում թուրքերը ևս վատ են ապրում և նրանք ամեն մի փոփոխությունից միայն բարելավում են սպասում»[16]։

Լիբերալ ուղղության «Петербургская газета» թերթը, «Վերջի սկիզբը» հոդվածում քննարկելով Բալկանյան թերակղզու դրությունը, եզրակացնում էր, որ Բ. Դռան կառավարության կամայականություններն ու բռնությունները քրիստոնյաների նկատմամբ հասցրին այն բանին, որ «խաղաղասեր բուլղարները ստիպված եղան զենք վերցնելու և այժմ ողջ Ռումելիան, ընդհուպ մինչև Ռոդոպյան լեռները, ապստամբում է...»։ Դեմոկրատական մամուլը, հանդես գալով ի պաշտպանություն Բալկանյան թերակղզու՝ օտարերկրյա լծի դեմ ապստամբած սլավոն ժողովուրդների, գրում էր, որ դա «իր բնույթով կատարյալ ժողովրդական ապստամբություն էր, հարկադրական՝ անտանելի ճնշումների պատճառով, հուսահատության ապստամբություն, կենաց և մահու ապստամբություն»[17]։ Հոդվածի հեղինակը կառավարությանը կոչ էր անում անհապաղ օգնություն ցույց տալ հարավային սլավոններին, եթե դիվանագիտական բանակցությունները դրական արդյունքի չհասցնեն։

Ճգնաժամը խորանալուն զուգընթաց մամուլը սկսեց հոռետեսորեն վերաբերվել հարավսլավոնական հարցի դիվանագիտական լուծմանը։ Պահպա-

[14] П. Д. Боборыкин, На славянском распутье, «Отечественные записки», 1878, № 4, էջ 195։

[15] «Санкт-Петербургские ведомости», 25 апреля 1876.

[16] Նույն տեղում, 5 մայիսի, 1876։

[17] «Отечественные записки», 1876, № 6, էջ 368։

նողական «Русский мир» թերթում հաճախ հանդես եկող մի անհայտ հեղինակ Տրյնովոյից, որին, ըստ իր հոդվածների, կարելի է դասել բուլղարական բուրժուազիայի ռուսոֆիլական շրջանների շարքին, դատապարտում էր արևմտաեվրոպական դիվանագիտությունը և համոզված էր, որ «Եվրոպան մտադիր չէ հօգուտ ռայաների վճռել Արևելյան հարցը, դա հայտնի է բուլղարներին», և քանի որ նա չի ուզում օգնել քրիստոնյա բնակչությանը, ապա թող հանդիստ թողնի նրանց. նրանք իրենք կազատագրեն իրենց հողերը և «ֆեդերատիվ կարգ կսահմանեն»[18]։

Ռուսական հասարակության մեջ զայրույթի նոր ալիք բարձրացրին «բուլղարական սարսափները»։ Հանդես գալով Բուլղարիայում Ապրիլյան ապստամբությունը դաժանորեն ճնշելու դեմ, պահպանողական «Московские ведомости» թերթը պահանջում էր սլավոնների կատարյալ անկախություն։ Հրապարակված հոդվածներում ռուսական հասարակայնությանը կոչ էր արվում ավելի ակտիվորեն օգնել հարավային սլավոններին։ Բացի դրանից ձգտում էին կառավարությանը ներշնչել, որ սլավոնական հարցի լուծման համար անհրաժեշտ է նրա միջամտությունը։

Բուլղարիայից հասնող լուրերը հավաստում էին անպաշտպան բնակիչների նկատմամբ իրագործվող դաժանությունների և կամայականությունների շարունակման մասին. այդ լուրերը ամենալայն արձագանքն էին գտնում ռուսական հասարակության զանազան շերտերում։ Ժամանակակիցներից շատերը վկայում էին, որ դա իր իսկ ժողովրդի անկեղծ ու հաստատուն զգացմունքն էր։ «Մեր ժողովրդական շարժումը զարմացրեց ոչ միայն Եվրոպային, այլև ռուսական հասարակայնությանը, այսինքն Ռուսաստանի կրթված, մտածող շրջաններին, հենց նրանով, որ նա ժողովրդական էր այդ բառի բուն իմաստով»[19],— ասում էր Ի. Ս. Ակսակովը 1876 թ. հոկտեմբերի 24-ին տեղի ունեցած Մոսկովյան սլավոնական կոմիտեի նիստում։

Անհրաժեշտ է նշել սլավոնական կոմիտեների եռանդուն գործունեությունը բուլղար ժողովրդին նյութական օգնություն ցույց տալու գործում։ Մոսկվայում, Պետերբուրգում, Կիևում և Օդեսայում 50—60-ական թթ. ստեղծված սլավոնական բարեգործական կոմիտեները իրենց խնդիրն էին համարում սլավոնական ժողովուրդներին օգնել ազգային մշակույթի զարգացման և ազատագրական պայքարի գործում, նվիրատվություններ հավաքել հօգուտ տուժած բուլղարների։ Այդ կոմիտեները օգնություն էին ցույց տալիս նաև Ռուսաստան բերված բուլղար որբ երեխաներին։ Ռուսական կայսրության բոլոր նահանգներից լուրեր էին հասնում հասարակ ժողովրդի կողմից ի սրտե կատարած նվիրատվությունների և այն մասին, որ բնակչությունը օգնությունը «համարում էր ժողովրդական գործ և պարտադիր իր համար»։

Գրող ու թղթակից Վ. Ի. Նեմիրովիչ-Դանչենկոն «Санкт-Петербургские ведомости»-ում իր տպավորություններն էր հաղորդում, ինչպես ինքն էր ասում՝ «Եվրոպական Ռուսաստանի ամբողջ արևելքում» կատարած իր այցելության մասին։ Նեմիրովիչ-Դանչենկոն 1876 թ. ամռան ընթացքում ճամփորդել էր «Վոլգայով, Կասպիականով, Կամայով և լեռնագործարանային Ուրալի խուլ անկյուններով». գրողը անցել էր մոտ ութ մեծ նահանգներով։ Նա համոզվեց,

[18] «Русский мир», 14 мая 1876.
[19] ОР ГПБ С-Щ, фонд И. С. Аксакова, д. I, թ. 2։

որ «գյուղերի ու ավանների ժողովուրդը, ձկնորսները, Վոլգայի նավերի բանվորները, Սամարայի ու Սարատովի հողագործները, Ուրալի զործարանների և հանքերի բատրակները մեծ կարեկցություն էին հայտնում «արյունակից ու դավանակից եղբայրներին» և չէին ափսոսում իրենց ընչին խնայողությունները, որպեսզի ուժերի ներածին չափ օգնություն ցույց տան»[20]։ Հեղինակը օրինակներ էր բերում գյուղացիների մասսայական նվիրատվությունների մասին հոգուտ հարավային սլավոնների։

Նվիրատվությունների հավաք կազմակերպելու վերաբերյալ հետաքրքիր տեղեկությունների ենք հանդիպում նահանգական տեղեկագրերում։ Շատ նահանգներում կային կամ բացվում էին հիվանդ ու վիրավոր զինվորների խնամատարական կառավարչությունների տեղական բաժանմունքներ, որոնք դիմում էին ազգաբնակչությանը «թախանձագին խնդրանքով՝ որքան հնարավոր է ավելացնել Հերցեգովինայի, Բոսնիայի և Բուլղարիայի դժբախտ զոհերի օգտին տրվող դրամական ու նյութական օգնությունը»[21]։

Թե ինչպիսի լայն թափ ստացան ժողովրդական նվիրատվությունները, կարելի է դատել մամուլում հրապարակված հաղորդումներից։ Այսպես, «Правительственный вестник»-ի տվյալների համաձայն 1876 թ. օգոստոսի վերջին վիրավոր ու հիվանդ զինվորների հոգատարության ընկերության գլխավոր վարչություն է մուծվել 294.910 ռ. 40 կոպ.[22]։ Սլավոնական կոմիտեի պետերբուրգյան բաժանմունքում 1875 թ. սեպտեմբերից մինչև 1876 թ. նոյեմբեր հավաքված գումարը կազմել է 810.698 ռ. $9^3/_4$ կոպ.[23]։ Բալկանյան թերակղզու սլավոններին նյութական օգնություն է ցույց տվել նաև ռուս վաճառականությունը։ 1876 թ. հուլիսի 15-ից մինչև օգոստոսի 21-ը նվիրատրվել է 153.199 ռ. 82 կոպ.[24]։

* * *

1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը, որը հինգդարյա օտարերկրյա լծից ազատագրեց բուլղար ժողովրդին, սկսվեց Ռուսաստանի ու եվրոպական մեծ պետությունների միջև ստեղծված միջազգային բարդ հարաբերությունների իրավիճակում։

Կ. Պոլսի կոնֆերանսի տապալման պատճառով, որը կատարվեց ոչ առանց Անգլիայի օգնության, բալկանյան սլավոնների խնդրի լուծման հարցում Ռուսաստանին սպառնում էր դիվանագիտական մեկուսացում։

Դրան հետևած բանակցությունները Ռուսաստանի և Ավստրո-Հունգարիայի միջև հանգեցրեցին գաղտնի Բուդապեշտյան համաձայնագրի ստորագրմանը, որում ավստրիական կառավարությունը որոշակի պայմաններով խոստանում էր «բարյացակամ չեզոքություն» Ռուսաստանի ու Թուրքիայի միջև պատերազմ ծագելու դեպքում։ Գերմանիան, ի դեմս Բիսմարկի, թեպետև խոսքով հայտարարում էր իր բարեկամական վերաբերմունքը Ռուսաստանի հանդեպ և իր շահախնդրության բացակայությունը Բալկաններում, իրականում ձգտում էր թուլացնել Ռուսաստանին՝ նրան Թուրքիայի դեմ պատերազմի

20 «Санкт-Петербургские ведомости», 5 сентября 1876.
21 «Воронежские губернские ведомости», 14 июля 1876.
22 «Правительственный вестник», 28 августа 1876.
23 «Русская старина», 1876, № 12, էջ 3։
24 «Русские ведомости», 5 и 25 августа 1876.

մեջ քաշելով և Անգլիայի հետ գժտեցնելով։ Պատահական չէ, որ ռազմական մինիստր Դ. Ա. Միլյուտինը 1877 թ. հունվարին գրում էր. «Բոլորից ավելի մեզ ձգտում է թուլացնել հատկապես այն տերությունը, որը համարվում է մեր լավագույն բարեկամը՝ Գերմանիան։ Վաղուց արդեն պրուսական դիվանագետներն ու գեներալները մեզ ներշնչում են Թուրքիայի հետ պատերազմելու անհրաժեշտությունը և ջանում են հավատացնել, որ մենք պետք է նրա դեմ մեծ ուժեր ուղարկենք»[25]։

Ռուսական դիվանագիտությունը քիչ ջանքեր չէր թափում վրա հասնող տարաձայնության խաղաղ լուծման համար, և նրան հաջողվեց հասնել այն բանին, որ 1877 թ. մարտին արևմտյան տերությունները ստորագրեցին Լոնդոնյան արձանագրությունը։ Սակայն ստորագրելով այն, Մեծ Բրիտանիայի կառավարությունը դաղտնի շարունակում էր քաջալերել Բ. Դռանը։

Բալկաններում լարված դրությունը խաղաղ ճանապարհով վճռելու իր բոլոր փորձերում հանդիպելով սուլթանական կառավարության դիմադրությանը, Ռուսաստանը ստիպված եղավ 1877 թ. ապրիլի 12 (24)-ին պատերազմ հայտարարել Թուրքիային։

Պաշտպան կանգնելով բալկանյան ժողովուրդներին, ցարական կառավարությունը ձգտում էր նախ՝ ամրացնել իր ազդեցությունը Բալկաններում, երկրորդ՝ «հաղթական պատերազմը», կառավարության կարծիքով, անհրաժեշտ էր նաև այն բանի համար, որ լիցքաթափեր իրավիճակը Ռուսաստանի ներսում՝ թուլացներ հեղափոխական պայքարի լարվածությունը։ Սակայն ինչ էլ որ լինեին ցարիզմի մտադրությունները, 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի նպատակները համապատասխանում էին բուլղար ժողովրդի ազգային շահերին։ Չնայած պատերազմի հետ կապված բոլոր զրկանքներին ու ծանրություններին, նա ժողովրդականություն էր վայելում և կարեկցանքի լայն արձագանք էր գտնում ռուս ժողովրդի աշխատավորական խավերում, որը հեռու էր ցարական կառավարության «բարձր» քաղաքականությունից և պատերազմի մեջ տեսնում էր օտարերկրյա լծից եղբայրական սլավոն, դավանակից ժողովրդի ազատագրությանն օգնելու ազնիվ առաքելություն։

Պատերազմ հայտարարելուց հետո ռուսական բանակը սկսեց կենտրոնանալ դաշնակից Ռումինիայում և Անդրկովկասում։ Սակայն հիմնական գործողությունները ծավալվեցին Բալկաններում։

Ռուսական գլխավոր հրամանատարության որոշմամբ 1877 թ. մարտի վերջին Քիշինևում սկիզբ դրվեց բուլղարական աշխարհազորի կազմավորմանը, որի կորիզը հանդիսացան Բուլղարիայից փախուստի դիմած ազգային-ազատագրական շարժման մասնակիցները։

Բուլղարական աշխարհազորի գլուխը կանգնեց լավ կրթություն ստացած, ռուս առաջադեմ գեներալ Ն. Գ. Ստոլետովը։ Բուլղարական դրուժիններում կային շատ ռուս սպաներ և կրտսեր հրամանատարներ։ Նրանք մեծ ծառայություն մատուցեցին աշխարհազորայիններին զինվորական արվեստ սովորեցնելու գործում։ 1877 թ. ապրիլի 26-ին Պլոեշտիում, հանդիսավոր իրադրության մեջ, բուլղարական աշխարհազորայիններին հանձնվեց Սամարա քաղաքի բնակիչների կողմից որպես նվեր ուղարկված դրոշը։ Պատմական

[25] Дневник Д. А. Милютина, 1876—1877, т. 2, М., 1949, էջ 130։

գրականության մեջ այն հայտնի է Սամարայի դրոշ անունով, որը դարձել է բուլղար ժողովրդի ազգային մասունքը։

Ռուսական բանակը, անցնելով Դանուբը, 1877 թ. հունիսի 14 (26)-ի լույս 15 (27)-ի գիշերը ոտք գրեց Բուլղարիայի տերիտորիան և սկսվեցին կռիվները օտարերկրյա նվաճողների դեմ։ Բուլղար ժողովուրդը խանդավառությամբ դիմավորեց ազատարարներին։ «Նրանք ցնծում էին։ Նրանց սիրտը լցնող ուրախությունը այնքան մեծ էր,— գրում էր այդ օրերի ժամանակակիցը,— որ բուլղարները առիթ էին փնտրում որևէ մեկի հետ կիսելու այն... Նրանց երախտագիտությանը վերջ չկար։ Ե՛վ տղամարդիկ, և՛ կանայք հանդիպում էին զինվորների հետ, սեղմում էին նրանց ձեռքերը, գրկախառնվում էին, նվիրում էին ինչ որ կարող էին... Եվ այդ հրճվանքը միանգամայն անկեղծ էր. բխում էր նրանց սրտից»[26]։

Պլացդարմ գրավելով, ռուսական բանակը ընթացավ դեպի Բուլղարիայի խորքը, ամեն տեղ հրճվանքով դիմավորվելով գյուղերի ու քաղաքների բնակիչների կողմից։ Սկսվեց ազատագրության համար մղվող պայքարի մեծ դյուցազնամարտը, որում բուլղար ժողովուրդը ակտիվ և անմիջական մասնակցություն ունեցավ։

Հաղթահարելով Թշնամու բանակի գիմագրությունը, Պլևնայի անկումից հետո ռուսական զորքերը 1877 թ. նոյեմբերի 28—դեկտեմբերի 10-ին հերոսական ձմեռային անցում կատարեցին Բալկաններով և սկսեցին հաջողությամբ առաջ շարժվել Օսմանյան կայսրության մայրաքաղաքի ուղղությամբ։ Թուրքական նահանջող բանակը ի վիճակի չէր զսպել ռուսական զորքերի հարձակողական երթը։ 1877 թ. վերջին Դանուբյան բանակում կար 554 հազար մարդ[27]։ Սուլթանական կառավարությունը, զգաստորեն գնահատելով իրական վիճակը, խաղաղություն խնդրեց։

Օտարերկրյա ատելի լուծը թոթափվեց, և «Բուլղարիան իր ազատությունը ստացավ ոչ թե Կ. Պոլսի կոնֆերանսներից ու արձանագրություններից, ոչ թե եվրոպական հումանիստների արցունքների շնորհիվ,— ինչպես գրում էր Վ. Կոլարովը,— այլ հաղթարշավ ռուսական բանակից, որը գրավեց Պլևնան, անցավ Շիպկան և սպառնում էր հենց Կ. Պոլսին»[28]։

Բուլղար ժողովրդի աջակցությունը ռուսական բանակին բարոյական մեծ նշանակություն ունեցավ երկու ժողովուրդների միջև եղբայրական հարաբերությունների ամրապնդման գործում։ Ռուսական զորքերը գտնվում էին բարեկամ ժողովրդի տերիտորիայում, որը կիսում էր այն ամենը, ինչ անհրաժեշտ էր զինվորին Թշնամու դեմ հաղթանակ տանելու համար։ Ստարա Զագորայի կռիվները, Շիպկայի հերոսական պաշտպանությունը և Բալկաններով ձմեռային ռազմերթը ամրապնդեցին ռուս-բուլղարական մարտական բարեկամությունը։

Բալկանյան ժողովուրդներին ազատագրում բերած պատերազմում սպանվեցին և վերքերից ու հիվանդություններից մահացան ռուսական բանակի

---

26 А. Куропаткин, Ловеч, Плевна и Шейново, «Военный сборник», СПб., 1881, № 1, էջ 214։

27 «Русско-турецкая война 1877—1878», под ред. И. И. Ростунова, М., 1977, էջ 257։

28 В. Коларов, Избрани произведения, т. 3, София, 1955, էջ 392։

200 հազար զինվոր ու սպա։ 1877—1878 թթ. կռիվների վայրերում կանգնեցված է մոտ 450 հուշարձան։

Ամեն տարի, մարտի 3-ին Բուլղարիան հանդիսավոր կերպով նշում է Ազատագրության օրը։ Բուլղարիայի ժողովուրդը հիշում և բարձր է գնահատում ռուս ժողովրդի օգնությունը։ «Բուլղար ժողովուրդը պահպանում և հարգում է Ռուսաստանի զավակների հիշատակը, որոնք իրենց կյանքը նվիրաբերեցին հինգդարյա օտարերկրյա լծից մեր ազատագրությանը»,— ընդգծեց Թոդոր Ժիվկովը Մոսկվայում Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 50-ամյակին նվիրված հանդիսավոր նիստում արտասանած իր ճառում։

Բուլղարական կոմունիստական կուսակցության առաջնորդ, միջազգային կոմունիստական ու բանվորական շարժման ականավոր գործիչ, Սովետական Միության մեծ բարեկամ Գեորգի Դիմիտրովը Սովետական Միության և Բուլղարիայի Ժողովրդական Հանրապետության միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության պայմանագիր կնքելու նպատակով ՍՍՀՄ ժամանելով՝ 1948 թ. մարտի 15-ին իր ճառում ասաց. «Ոտք դնելով մոսկովյան թանկագին հողի վրա, առաջին խոսքով մենք կամենում ենք հայտնել մեր խոր երախտագիտությունն ու անսահման շնորհակալությունը Սովետական Միության ժողովուրդներին և, առաջին հերթին, ռուս մեծ ժողովրդին այն բանի համար, որ նրանք երկու անգամ ազատագրեցին Բուլղարիան օտարերկրյա լծից։ Առաջին անգամ՝ հինգդարյա թուրքական ճորտությունից, երկրորդ անգամ՝ գերմանա-ֆաշիստական ստրկությունից»[29]։

---

[29] Г. Димитров, Съчинения, т. 14, София, 1955, էջ 20։